

ՀԱՒԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ՄԱՏԵՐԱԶԱՐԻ ԱՊԱԳԱՆ

Ա. Փոխ. Ռ.

Ա. ԷԶՄԻԱՆԻՆ

Էլեկտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ

1919 թ.

327.2

Գ-32

2021

«Միջազգային Բանկ»
27 SEP 2006

ՀԱՆՔԵՆ ԵԳԻՍՏՈՂՈՍ

27.2
2-32




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆԻՍՏՐԱՏՈՐԱՏԻ

Ա. Փոխ. Թ.



Ս. ԵԶՄԻԱՇԻՆ


Էկոնոմիկական Տնտեսական Միջոցառումների
1918 թ.



12 APR 2013

18795

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՊԱԳԱՆ



Երբ ընդհանուր թշուառութիւնն իբրեւ Աստուծոյ բարկութիւն անխնայ աւերում է իւր ճանապարհին ամէն ինչ, կարելի է հանգիստ մտածել նրա մասին և կամ անհոգ ու սառնասիրտ ուսումնասիրել նրա պատճառներն ու էութիւնը. այն դժուար և խիստ ծանր է, բայց բնական ձգտում, ոչ պակաս բնական քան անիրաւութեան, անարդարութեան ու զուլումի ձեռքից քաղցածութեան ու թշուառութեան մատնուածներին օգնելու—կարեկցելու բոլորն ցանկութիւնը—մանաւանդ որ մարդկային արիւնը հոսել և հոսում է գետի պէս և ցայսօր մարդկութիւնը իւր գոյութիւնն ապահովող հիմնական սկզբունքների նկատ-

36669-62

մամբ դեռ ևս մի քայլ անգամ առաջ չի շար-
ժուել և թնդանօթները դղրդիւնի ու վերաւոր-
ները հառաչի տակ դարէգար շարունակում է
սկզբունքային անվերջ կռիւլ:

Սկզբունքային կռիւլը որ կարմիր թելի պէս
անցնում է մարդկային պատմութեան միջով—
առաջ է մղում կատաղի և սառսռեցուցիչ փառ-
տերով՝ մարդկային անթիւ ու անհամար կեանքե-
րով: Ազգերի, պետութիւնների ու մարդկանց իրար
հակառակ շահերն ու հասկացողութիւնները, վիճա-
բանութիւններն ու հակաձառութիւնները, ուղի-
մատումներն ու մեքենայութիւնները հանդէս են
բերում աշխարհի ամէն անկիւնում էլ քաղաքա-
կրթուած թէ անկրթ ազգերի և ժողովուրդների
մէջ թնդանօթային կործանիչ կրակ, ականների
ցնցող պայթիւն և անթիւ ու անհամար մարդ-
կային զոհեր. և երբ լսում կամ կարդում ենք
որ երկու բանակներ կեանքի և մահու կռիւ են
մղում իրար դէմ, այդ սոսկ կռիւ չ'պիտի հաս-
կանալ, այլ հասարակական նախճիր, արեան
մարտ, որ միայն ցամքել—վերջանալ կարող է
երկու ախոյեանների ոյժերի սպառմամբ: Այն,
երբ նայում ենք սարսափելի հրդեհի ծիրանա-
փայլ գոյնին, չենք կարող նրա պատճառների մէջ
չ խորասուզուել, այդ յաւիտենական սկզբունքա-
յին ահեղ կռուին ականջ չ'դնել:

«Սկզբունքը պատմութեան ոգին է». երկու
աշխարհայեացքներ՝ մարդկային ազանութեան
կամ սովորութեան և ազատ ու անսահման կա-
տարելութեան սկզբունքները յաւիտենական կռիւ
են մղում. դարերի անհունութեան մէջ կորչում
է կռուի սկիզբը. ամէնից առաջ պարզ և որոշ
կերպով ձևակերպել է հրէայ Յսային: «Եւ սպա-
սում էր նա իրաւունքի և արդարութեան, բայց
ահա արիւնհեղութիւն և խռովութիւն. վնայ ձեզ
որ ուրիշներին զրկելով տան վրայ տուն էք
աւելացնում, ագարակի վրայ ագարակ»:

«Ստրկամիտների բարոյականութիւն—ար-
համարներով պատասխանում է Նիտշէն:

«Եւ սրերից արօրներ կը կռեն, տէգերից
մանգաղներ, ազգերը սուր չեն բարձրացնի իրար
դէմ և չեն կռուի..» շարունակում է խորհող
Յոային:

«Պատերազմն անհրաժեշտ է բարոյական
դարգացման համար. նրա մէջ է մեր քաջութեան
գերագոյն արտայայտութիւնը..» ընդհատում է
խորիմաստ Հեգելը:

«Այն ժամանակ գայլը կարած է գառան հետ,
հորթը, առիւծը և եզը կը ճարակեն միասին..»
պնդում է Յոային: Բազմաթիւ ձայներ պատաս-
խանում են Յոայուն—«օրինաւոր է առիւծի բա-
ժինը». պատերազմն աստուածային ճարտարապե-

տութեան զէնքն է և հանդէս է բերում մարդու ոյժերն ու ընդունակութիւնները, որոշում կամ ապահովում է ազգերի գոյութիւնն ու բարօրութիւնը. պատերազմը և նրա հետ կապուած դժբախտութիւնները զարգացնում են մարդու բարոյական ոյժերը. եթէ պատերազմը չ'լինէր, քաջութիւնը, համբերութիւնը, տոկունութիւնը, անձնազոհութիւնը, մահ արհամարհելը և այլն կը չքանային երկրի երեսից...» պնդելով պընդում են Դր-Մեսօրը, Կոմս-Պորթալիսը, Անսելիոնը (աւետարանի սպասաւոր):

Խորը համոզմունքով շարունակում է Եսային, «և մանուկը կը խաղայ, իժի բնի մօտ ու ոչ մի փնաս չի պատահի, որովհետեւ ինչպէս ծովը ջրով, այնպէս և երկիրը կը լցուի աստուածային յայտնութեամբ»։ պնդում են նոյնը Եսայու աշակերտներ Սեֆեկան, Ֆենելոնը, Կանսը, Լայբնէցը, Հայնէն, Հիւգոն, Վոյսերը, Պասկալը, Մապասանը և այլ շատ շատերը։ Ցնորք է—բացականչում են ուրիշները։ Աշխահը սակայն կառավարուել և կառավարում է սովորութեամբ։ 1490 թ. (Ք. Ա.) մինչև մօտ 1900 թ. այն է 3390 տարուայ ընթացքում մարդկութիւնն օգտուել է միայն մօտ 240 տարուայ համեմատական խաղաղութեամբ. իսկ 3150 տարուայ ընթացքում ցոյց է տուել քաջութիւն, անձնազոհութիւն,

համբերութիւն, տոկունութիւն և այն բոլոր մեծամեծ առաքինութիւնները, որոնց մասին երգել և երգում են Հեգելը, Անսելոնը, Դր-Մեսօրը—բոլոր քաղաքագէտները, դիպլոմատները, զինուորականները և պետական մարդիկ ամէն տեղ և ամէն ժամանակ, աշխարհի ամէն անկիւնում ու հորիզոնների տակ...:

Ի՞նչ է պատերազմը։

Մեծն Նապալիոն Պոնապոլի ստորերկրեայ թագաւորութիւնը մտաւ իւր կորցրած մօտ ութ միլիոն քաջարի զինուորներով։ Բիսմարկը և Մոլտկէնն այնտեղ երեացին աւելի համեստ թուով մօտ մի միլիոնի ուղեկցութեամբ։ Իսկ ամբողջ 19-րդ դարը 15 միլիոն մարդուց աւելի կորուստ է ունեցել։ Չեմ յիշում վերջին համաշխարհային պատերազմը իւր անթիւ և անհամար զոհերով ու կորուստներով։ 1870 թ. պատերազմը զոհ է տուել 800,000 մարդ. իսկ ռուս-տաճկական պատերազմը ոչ պակաս քան 400,000 զոհ. աշխատենք բացատրել վերջին երկու թուերի նշանակութիւնը։ Եթէ այդ մի միլիոն երկու հարիւր հազար մարդիկ, որ ընկել են Սեդանի Մեցցի, Պլենայի և այլ «նշանաւոր» դաշտերում, լսէին Կանսին, Լայբնցիցին, Պասկալին և նրանցից առաջ Եսայուն և իրենց սրբերից խօսքեր կռէին օրէկան միայն մի քանի ժամ աշխատելով, նրանք

կը շինէին հետեւեալ հսկայական գործը. տարեկան հաշուելով 300 բանւորական օր և բանւորական օրուայ արժէքը միայն յիսուն կոպէկ, նրանց աշխատանքը տասը տարուայ ընթացքում կը հասնէր 1800 միլիոն ռուբլու. որպիսի աշխատանքով մարդկութիւնը կը հարստանար հարիւր հազար դպրոցով—(3000 ռ. դպրոցական շէնք կառուցանելով, իսկ 15000, ռ. դպրոցի գոյութիւնն ապահովելով). կամ 300 համալսարանով—իւրաքանչիւր համալսարանին յատկացնելով վեց միլիոն ռուբլի. չ'հաշուած մարդկային արիւնն ու արտասուքն իբրև անարժէք մի բան. և այս միայն երկու պատերազմի համար. այդ մարդիկը կը կատարէին այդ հսկայական գործն առանց մարդկային կեանքեր զոհելու և առանց արտասուքի ու արեան: Վերոյիշեալ թուերն աւելի պարզելու համար աշխատենք թուանշանի մեծութիւնը հէնց թուանշանով ցոյց տալ. եթէ իւրաքանչիւր բոլէում անընդհատ մի մարդ սպանուի—ապա 1,200,000 մարդ սպանելու համար պէտք կը լինի երկու տարի և մօտ $3\frac{1}{2}$ ամիս. այն շատ ցաւալի ու անհանդուրժելի—բայց հնարաւոր և կարելի դարձած, շնորհիւ թնդանօթներէ և մարդկային տգիտութեան. բացի այդ պատերազմն ահագին քանակութեամբ խեղանդամներ է աւելացնում և զրկում աշխատող ձեռքերից ու երկրի

համար տնտեսական սնանկութեան դուռ բաց անում և այլ նման տեսակի պատուհաններ: Սակայն այս դեռ բոլորը չէ. զինուած աշխարհը դաւանում է այն հին սկզբունքը թէ «եթէ սիրում ես խաղաղութիւն, զինուած ու պատրաստ եղիր կռուելու» և այդ սկզբունքի համաձայն էլ ուժասպառ է անում ժողովրդին. թուլացնելով ժողովրդի ոյժը, միլիտարիզմը քայքայում, փչացնում և կտրում է կանոնաւոր ու օգտակար աշխատանքից, սովորեցնում է կոյր հնազանդութեան, հարստահարում ժողովրդի հոգեկան աշխարհը—արհամարհելով միաժամանակ մարդկային արժանապատուութիւնը. արբեցութիւնը, անառակութիւնը և նման տեսակի սովորութիւնները կամ ախտերը միլիտարիզմի սիրելի որդիքն են. ազգերի ազատութեան մշտական ճնշողն ու թշնամին է միլիտարիզմը: «Պատերազմը ոճրագործութիւնների մի շարք, հրդեհ, թալան, բռնութիւն ու սպանութիւն է» ամփոփում է իւր խորհրդածութիւնը պատերազմի մասին Անատոլ Ֆրանսը: Իսկ Պասկալի զգայուն և խորհող հոգին դայրոյթով լցուած բացականչում է «արդեօք կարելի է աւելի ծիծաղելի բան երևակայել քան այն, երբ մարդ արարածն իրաւունք է համարում իւր նմանին սպանելու միայն նրա համար, որ նա ապրում է այլ երկրում, այլ հորի-

զոնի ներքոյ—շունենալով նրա հետ ոչ ծանօթութիւն, ոչ գործ, ոչ հաշիւ և ոչ մի առնչութիւն»:

Պոյութեան կռիւը բնական օրէնք կամ երեւոյթ է, որին ենթակայ է մարդը. որը իւր ծընուած օրից պատերազմում է և շարունակում է կռիւ մղել մարդը մարդու, ընտանիքն ընտանիքի, լեզուն լեզուի, ցեղը ցեղի, ազգն ազգի դէմ: Միևնոյն ընտանիքի անդամները դեռ նախապատմական ժամանակներում պատերազմի սկզբունքներից ծագող և յաղթող ոյժի իշխանութիւնը ճանաչողները դաշն են կապել-գերիշխանութիւնը ընտանիքի մեծին վերապահելով. և այդպէս ահա բնութեան օրէնքի ոյժով սկիզբն է դրուել խաղաղութեան և իրաւունքի. որպիսի երևոյթը կամ սովորութիւնը շարունակուել և շարունակւում է ցարդ. ոյժի իրաւունքը կառավարել և կառավարում է ամէն ինչ. ամէնատեսակ զաղափարները, բարոյական հասկացողութիւններն ու օրէնքը եթէ ոչ ենթակայ—բայց կապուած են ոյժի հետ. ամէն տեղ ոյժն է կանգնած. «ոյժն իրաւունքի անհրաժեշտ ապահովութիւնն է» ասում է Ա.Ասելլոնը. ոյժն անհրաժեշտ է խաղաղութիւնն ապահովելու համար. պատերազմից ծագում է խաղաղութիւնը, իսկ ոյժից ծնում իրաւունքը: Կանոնաւոր կրթուած և կազմակերպուած համայնքներում կարծում կամ ընդունում

են, որ քաղաքացիներից իւրաքանչիւրը հաւասարապէս ոյժեղ է, հետևապէս և նրանցից իւրաքանչիւրի իրաւունքը միանման է. ահա այստեղից էլ ծագում է արդարադատութիւնն. հասարակութիւնն ոյժերի հաւաքածու է և նոցա հաւասարազօր ոյժը երաշխաւորում է նրա անդամների իւրաքանչիւրի արդարադատութիւնը:

Այդպէս առաջինն իրաւունքի խնդիրն է, իսկ նրա ծնողն ու պահպանողը ոյժը:

Պրոսոնը պնդում է թէ «ոյժի իրաւունքը դոյութիւն ունի և այդ ընդունում են պատմութիւնն ու ազգերը. զինուորը գիտէ որ պատերազմով ազգերն իրենց իրաւունքն են դռնում, որ պատերազմը դատաստան է ոյժի անունով...: Նա համաձայն չէ Կեկերոնի և Հորացիոսի հետեւալ կարծիքին—թէ պատերազմը վէճը վճռելու վերջին միջոցն է—պատերազմն ինքն ըստ ինքեան արդարադատութեան բացասութիւնն է, կատարեալ չդոյութիւնն ու անարդանքը: Ո՛չ—ասում է նա—պատերազմն արդարադատութիւն է, պատերազմը նոյնն է ինչ որ դատաստանը, ուր յաղթութիւն կրելու համար կռուող երկու կողմերի ազօթքները ոչնչով չեն տարբերւում իրաւաբանների ճառերից քաղաքացիական դատարանում—նոցա հիմունքները թնդանօթածիգ և հետեւալ զօրքերի բերած հիմունքներից, որ ինչպէս

դատարանի վճիռն իրաւունքի արտայայտութիւն է համարուում—այնպէս էլ յաղթութիւնը իրաւունք: Սակայն որքան էլ ոյժն իրաւունքի հիմք համարուի—բայց և այնպէս չի կարելի պատե-
րագմն արդարադատութիւն համարել և ոչ էլ ոյժը երբէք իրաւունք»: Պէտք է կարծել—որ մարդու բանականութիւնը կարող էր ուրիշ տուեալ-
ներ հանդէս բերել իրաւունք արտայայտելու համար, բայց մարդը շնորհիւ իւր կենդանական բնութեան—իւր կեանքի կամ բնական օրէնքը կռիւն է համարում և չ'զիտէ կամ տու այժմ չի ուզում ճանաչել այլ իրաւունք—բացի ոյժից առաջացածը: Փաստօրէն միևնոյն եղրակացու-
թեան են գալիս թէ Պրուսոն—որ պատերազմն արդարադատութիւն է համարում և թէ Կանտը—որն ասում է «պատերազմը միշտ անարդար է ըստ ինքեան այն մտքով—որ այստեղ ոյժն է որոշում իրաւունքը կամ աւելի ճիշտն ասած պատերազմում չկայ ուրիշ իրաւունք բացի ոյժից...»:

Պրուսոնը պնդում է թէ կայ ազգն ազգին նուաճելու—կլանելու իրաւունք. մենք կասենք—այո՛—կայ նոյնպէս հռովմէական քաղաքները հրաբուխի լաւայի և մոխրի տակ թաղելու «իրաւունքը» կայ—այո՛ կայ—որովհետեւ կայ... բայց իսկական բանականութիւնը «զուտ կամ ճշմարիտ

բանականութիւնն է» և ոչ «գործնականը» և հրաբուխի վիժման մէջ չենք կարող նկատել այն: Երբ որ Պրուսիան Փրանսիայից կտրեց նրա մարմնի մի մասը՝ Էլզասն ու Լոտարինգիան, ապա ըստ Պրուսոնի Պրուսիան միայն ապացու-
ցեց, որ ինքն իրաւունք ունի—քանի որ գործ-
նականի մէջ ինքն է տարել. իսկ մենք կասենք—որ Պրուսիան նուաճել է մի քանի գաւառներ և իւր ոյժով ստեղծել է այնտեղ գերմանական իրաւունք—քանի որ իրաւունքի մասին եղած գաղափարը իւր մէջ պարունակում է մարդկանց այդ իրաւունքին ենթարկող բարձրագոյն իշխա-
նութեան գաղափար. մի խօսքով մարդկութիւնն ու ազգերը ենթակայ են ոյժից ծնունդ առած կեանքի ընդհանուր օրէնքներին և ենթակայ մշտական պատերազմի:

Գոյութեան կռիւը մարդկային կեանքի ան-
փոփոխ պայմանն է—որ պահպանւում է մեծա-
պէս նիւթական պայմաններով ու պահանջներով,
—որոնց պէտք է բաւարարել. մարդու հասակի հետ էլ շարունակ այդ պահանջները կամ մարդ-
կային կարիքների չափը աճում—մեծանում են. այո՛—չափազանց դանդաղ—բայց անփոփոխ և անընդհատ. սակայն այդ կարիքների և նոցա
բաւարարելու խնդրի մէջ գոյութիւն ունեցող բացը փնտում է իւր սկզբնական դրութեան մէջ:

եւ թէ և անվերջ և անհաշիւ կերպով աւելացել
ու բաղմապատկուել են ապրելու պահանջներն
ու կարիքները, այնուամէնայնիւ միշտ տես-
նում և լսում ենք—որ մարդկութիւնն այսօր էլ
—ինչպէս դարեր առաջ աղերսում է օրական
պարէնի համար... աղերսում է և իւր ճակատի
քրտինքով ստանում այն սակայն չափազանց
համեստ չափով: Աշխարհի վրայ—բոլոր ազգերի
և ցեղերի մէջ տեղի ունեցած և ունեցող պա-
տերազմների սկզբնապատճառների էութիւնը եղել
է և է տնտեսական շահը: Պէտք չէ խօսել այն
անթիւ պատերազմների մասին—որոնք մկուել
են 'ի փառս այս կամ այն պետի կամ ազգի:
Հնում որոշ ցեղեր ապրել են միմիանցից բաւա-
կան հեռու տարածութեան վրայ—անտառներով,
գետերով ու ծովերով իրարից անջատուած, ու-
րեմն և շահերի ընդհարման անմիջական պատ-
ճառներից զերծ. բայց ժամանակի ընթացքում
ցեղերը բազմանում և իւրաքանչիւրն էլ ցան-
կանում է ընդլայնել իւր իշխանութիւնը կամ
երկիրը և իրար մօտենալով նոյն իսկ հարեան
են դառնում, և որովհետեւ բնական աճեցողու-
թիւնը կանգ չի առնում և միւս կողմից էլ առաջ
գնալ—իրենց երկիրն ընդարձակել չեն կարո-
ւորանում, ահա և կեանքի կամ գոյութեան
կռուի օրէնքը երկու ելք է ցոյց տալիս նրանց:

առաջինը՝ ցեղի մի մասը պիտի զաղթէ հեռա-
նայ մի այլ աշխարհ—և երկրորդ՝ մի ցեղը պի-
տի ստրկացնէ միւսին և զրաւէ նրա երկիրը.
և որովհետեւ ցայսօր էլ դեռ սովորութիւնն է
կառավարում արար աշխարհը և տհաս մարդ-
կութիւնն էլ իւր կենդանական բնութիւնից զեռ-
ջի ուղղով հեռանալ, առանց այլեւայլութեան
երկրորդ ելքն է ամենաբնական համարում և
ընդունում: Ուստի և սկսում է արիւնհեղու-
թիւն և պատերազմ մէկը միւսին նուաճելու ու
կլանելու նպատակով. ահա այսպիսով ոյժից ստեղ-
ծւում է իրաւունք. այսպէս է պատերազմի
պատմութիւնն ու նրա ներքին էութիւնը. դրանք
են ահա պատերազմի խորքում դրուած պրու-
փինները, որոնցով գործում են մարդիկ և իզուր
չէ որ հին ժամանակներում պատերազմ և ա-
ւար համազօր նշանակութիւն են ունեցել և ըստ
մեծի մասին պատերազմի շարժիչն ու ոգին հա-
մարել են աւարը: Մարդկութիւնը շատ բան է
մտածել, խորհել, կրել ու արել, սակայն ցայսօր
էլ չի կարողացել ու կարողանում մի համաձայ-
նութեան բերել իւր կենսական պահանջները և
ոչ էլ այդ պահանջներին գոհացում տալու հնա-
բաւութիւն ստեղծել. այդ նպատակի համար իսկ
նա ընդլայնել է իւր իշխանութիւնը—իրաւուն-

քը. փոփոխուել է հասարակութեան հաւասարակշռող ոյժը, որի համաձայն և իրաւունքի մասին եղած գաղափարը կերպարանափոխուել է, բայց մարդկային գաղափարների կարիքներն առաջուայ նման մնացել և մնում են չբաւարարուած: Քաղաքակիրթ մարդկութիւնը նուաճել է ամէն բան ինչ որ յատնի չի եղել, երկրագնդի վրայ հետադասուել է ամէն ինչ և ամէն տեղ ինչ որ հետադասուած չի եղել—Աֆրիկայի մայրցամաք, միջին Ասիա և այլ տեղեր—ուղարկել է իւր բնակչութեան մի մասը—բայց առաջուայ նման մարդկային կենսական կարիքների գոհացման խնդիրը մնացել և մնում է ձայն բարբառոյ յանապատիս:

Անցեալի փորձն ու անփութութիւնները, գիտութեան լոյսը, ժողովրդական տնտեսութեան բոլոր ձևերն արտաքուստ փոխել կամ կերպարանափոխել են և ստեղծել այսպէս կոչուած ներկայ հասարակական կապիտալիստական կազմը. բայց թէ որքան հեռու է մնացել ժողովուրդների կամ հասարակութիւնների կարիքների գոհացման բարեյաջող լուծման խնդիրը, այդ անկայատնի է ամէնքին. ամէն ինչ փոխուել է—այս կամ այն ձևակերպութիւնը ստացել—բայց պատերազմի ողին—սկզբունքը նոյնն է մնացել ամէն տեղ:

Ցաւելով պէտք է շեշտել որ պատերազմի սկզբունքը, նրա յետին իմաստն աւարառութիւնն է եղել և մնացել. մինչդեռ պատերազմը իբրև թէ վաղուց է հրաժարուել աւարառութիւնից. պատժուում է աւարառու զինուորը—սակայն զրաւում է թշնամու աւարը, պատերազմական տուգանք է պահանջում և այլ նման տեսակի սրբազործուած երեոյթներ և այլն:

Եւ այս ամէնի մէջ սակայն անպատասխան է մնում վերստին մի հարց՝ ում և ինչի՞ համար է պատերազմը:

Անտարակոյս է—որ ինչպէս այժմ, այնպէս էլ հնում պատերազմների զլխաւոր պատճառներից առաջինը եղել է և կը լինի տնտեսական շահը, քանի որ քաղաքակրթութեան բարիքներով հաւասարապէս չեն օգտուում ամէնքը, բոլոր ազգերն ու ցեղերը և ընդհանուր մարդկութիւնը աշխարհի բոլոր անկիւններում—որպէսզի ամէն տեղ էլ ստեղծագործութիւն առաջ գայ և պետութիւնների ախորժակ գրգռող իրենց երկրի գործարանների ստեղծագործութեան արդիւնքների համար ստեղծուած չարիքների արմատ շուկաները վերանան. որոնց ձեռք բերելու համար այսօր աշխարհը տակն ու վրայ է լինում. այն ժամանակ արդէն

36669-62

Հնդկաստանն ինքը կարտադրէ չիթ, Չինաստանը կրպատրաստէ կտրի մեքենաներ և կրուպի թնդանօթներ։ Աֆրիկայի խորքերում եւր գերմանացիները տասնեակ տարիներից իվեր մեծ եռանդով պատռատում են իրենց քաղաքակրթութիւնը, եթէ պէտք է իրենք կը պատրաստեն աւտոմոբիլներ, արագատիպ մեքենաներ, ստորերկրեայ նաւեր և այլն։

Այս և նման տեսակի տնտեսական շահերն ահա ոգի և կեանք են ներշնչում պատերազմին և նրա սկզբունքը դերագրանքի համարում։

«Եւ նա արդարադատութիւն և խաղաղութիւն էր սպասում—և ահա արիւնհեղութիւն, ազազակ և կռիւ. վայ ձեզ տան վրայ տուն աւելացնողներ, դաշտի վրայ դաշտ—ուրիշներին տեղ չ'տալու համար, կարծելով թէ մենակ դուք էք ապրում աշխարհի վրայ»։

«Պատերազմը կամ՝ կռիւը դադարում է ոյժի գերակշռութեամբ և վերջանում է երբ ընդունւում է ոյժի իրաւունքը, ասում է Պրուտան. անշուշտ չի կարելի ոյժն ընդունել կամ ճանաչել դերագոյն բանականութեան արդիւնք. սակայն ասացինք որ ոյժից իրաւունք է յառաջանում և ապա խաղաղութիւն ծնում. ինչպէս պետութիւնների մէջ պատերազմը ստի-

պողարար խաղաղութեան է փոխւում. ինչպէս և միւլենոյն համայնքի առանձին անհատների կռիւ միայն կեանքի կամ զոյութեան կռուի սկզբունքից ծագելով ստիպուած է խաղաղութիւնը գերադասել կամ ընդունել, այն է ճանաչել իրաւունքը, որ հասարակութեան ոյժը ապահովել է անձի համար։

Փորձենք ձեւակերպել այն զլխաւոր կէտերը, որ պատերազմի պաշտպանները առաջ են բերում։

ա. Պատերազմն աստուածային է։

բ. Եթէ վերանայ պատերազմը—մարդկութիւնը կը կորցնի քաջութեան, հերոսութեան, անձնազոհութեան ոգին և մահ արհամարհելը։

գ. Եթէ պատերազմը վերանայ—մարդկութիւնը կայլասեռուի և կը թմրի։

դ. Պատերազմը ազնուացնում է ցեղը։

ե. Եթէ զոյութիւն ռենին ազգութիւններ, պետութիւններ, ապա պէտք է լինին նաև զօրքեր և պատերազմներ։

զ. Ժողովուրդը բարոյական անկման վիճակին կը հասնի եթէ տոգորուած չ'լինի պատերազմական ոգով։

է. Եւ վերջապէս խաղաղութիւնը զառանցանք է, ցնորաբանութիւն է, քանի որ պատերազմն ամբողջ կենդանական աշխարհի անհրա-

ժեշտ պահանջն է և կանոնաւոր դրութիւնը, որովհետեւ մարդկութիւնը պատերազմել է, պատերազմում է և հետեւաբար պիտի պատերազմէ:

Ձեակերպներ նաեւ պատերազմի հակառակորդների կարծիք պատասխանները:

ա.—Պատերազմն այնքան է աստուածային ինչքան իւրաքանչիւր ոյժի գործադրութիւն, ինչքան մարդկային կեանքի գոյութեան կռուի ձեւերը, արիւնհեղութիւնը և աւերածութիւնները:

բ.—Մահ արհամարհելը զատարկ խօսք է. ամբողջ կենդանական աշխարհը սիրում է կեանք և չի կարող չ'սիրել. իւրաքանչիւր շունչ ցանկանում է ապրել. անկեղծ ու քաջ զինւորները խոստովանում են, որ չեն ուզում մեռնել և վախենում են մահից. սակայն այդ ամէնը չի խանգարում կամ արգելում իրենց զործը տեսնել և քաջարար ու հանգիստ մեռնել, երբ անհրաժեշտ է. կեանքի բոլոր ասպարէզներում ու մրցարաններում մարդկութիւնը յայտնի է եղել իւր ընդունակութեամբ և քաջութեամբ, անձնագոհութեամբ և հերոսութեամբ. բժիշկը, բանաւորը, զինւորը, ճարտարապետը, գիտնականը, գթութեան քոյրը, քաղաքացին, շինականը և այլն ամէնքն էլ գիտեն մեռնել. միթէ հաբկաւոր է ապացուցանել:

դ.—Հին առած. նմանօրինակ հէքեաթներով հազարաւոր տարիներ կաշկանդել են մարդկութեան և ձգել ահ ու տագնապի մէջ. ստրկութիւնը կամ ճորտութիւնը վերացնելուց առաջ մարդկութեան վախեցնում էին այդպիսի խօսքերով կամ սպառնալիքներով—բայց նա հրաժարուեց կամ ազատուեց ստրկութիւնից—և մարդկութիւնը ոչ թէ կ'այլանդակուի այլ անպատճառ պատերազմից կը հրաժարուի և կը վերածուի կամ կը կոչուի նոր կեանքի, ընդհանուր մարդկութեան դէպի քաղաքակրթութիւն և կատարելութիւն տանող նոր օրերի և գեղեցիկ կարգերի ու ձևերի համար:

դ.—Պատերազմը չի կարող աղնուացնել ցեղը կամ սերունդը—քանի որ ամէն վսեմ—մատաղ, զօրեղ, լաւ ու աղնիւ բան պատերազմի ժամանակ ոչնչանում և այլանդակւում է, ու սերնդի աճեցողութիւնը թողնւում է տկարներին և հաշմանդամներին, խուլներին համրերին ու թուլամորդներին. ո՛չ—պատերազմը չի կարող աղնուացնել ցեղը:

ե.—Պէտք է ենթադրել—որ ազգերի և թագաւորութիւնների գոյութիւնը չի պահանջում անպատճառ զօրքեր և պատերազմներ. (այս մասին քիչ յետոյ):

դ. — Ամէն որ — ով քիչ թէ շատ ծանօթ է զօրանոցներին կեանքին և այն սարսափելի դեմոքալիզացեային, (վարք ու բարքի ապականացման) որ զօրանոցը մտցնում է ժողովրդի կեանքի մէջ և բարոյական ու հոգեկան անկում առաջ բերում, չի կարող այդ առարկութեան չպատասխանել լոկ ծաղրանքով:

է. — Մշտական խաղաղութիւնը ցնորք է — զառանցանք. սակայն հզօր պետութիւնների միութիւնը, անթել հեռագիրը, երկաթուղին, օդաչուն և նման աեսակի հրաշագործութիւններ, հրաշագործ մեքենաների գոյութիւնը և այլն, որ այսօր տեսնում ենք իրականացած, մի ժամանակ որակուել է «ցնորք ու զառանցանք» բառերով. այո մարդիկ պատերազմել են և պատերազմում են՝ մարդիկ կրակ են վառել ժայռերի վրայ — որպէսզի փոթորկի ժամանակ նաւերը գնան դէպի կրակը և խորտակուին, այո — մարդիկ այդ ամէնն օրինաւոր որս են համարել. սակայն մարդիկ էին — որ խղճի ազատութիւն ընդունեցին, բոլոր վտանգաւոր նաւահանգիստներում փարոսներ, փրկաւէտ նաւահանգիստներ հաստատեցին. ոչ. պէտք է վերջ ի վերջոյ խաղաղութիւնը թագաւորէ ամէն տեղ. երկիրը պէտք է լցուի ծիրով յայտնութեամբ, ինչպէս ջրերը լցւում են ծովը:

«Հանուր մարդկութեան կազմակերպութեան խնդիրն անհնարին չէ վճռել — մինչև անգամ սատանաներից բաղկացած ժողովրդի համար — միայն թէ այդ ժողովուրդն օժտուած լինի ըմբռնելու ընդունակութեամբ. այդպիսով կարելի է մշտական խաղաղութեան հասնել — չ'սպասելով մարդկութեան բարոյական վերածնութեան, որ ըստ ինքեան անհնարին է՝ ասում է Կանտը. թէ և մարդիկ սատանաներ չեն և լաւ կամ վատ են նրանցից — մենք այնուամէնայնիւ այն հիման վրայ, որ մարդիկ օժտուած են բանականութեամբ, համարձակ և համոզուած ասում ենք, նայելով հրդեհի փայլին, դժոխք դարձած կեանքին, արեան դետերին... ո՛չ — հրդեհները, մարդկային զոհերն անհրաժեշտ — մշտական կամ յաւիտենական չեն» ոչ — պատմութիւնն ամուր և հաստատուն կերպով մարդկութեան տանում է դէպի այլ տեղ... ոչ — կոպիտ ոյժը, որ իրաւունքի աղբիւր է նկատուում, չի կարող տեսական համարուել և մնալ. ինչպէս իրը կամ մարմինը չի կարող օդի միջից ձողողական օրէնքի հիման վրայ չընկնել, կամ ջուրը զառիվայրով չ'հոսել. մարմինը վազուց է ձգուած և նա բնական օրէնքով ընկնում է, ջուրը վազուց է սկսել հոսալ. այո՛ յաւիտենական խաղաղութեան գա-

դափարն անշեղ առաջ է սլանում և վերջ ի վերջոյ պիտի իշխէ եկրի վրայ...

Ասում են, «որովհետեւ դոյութիւն ունի պետութիւն—հայրենիք, հետեւաբար պէտք է դոյութիւն ունենայ նաեւ զօրք և պատերազմ»։ Բայց մի՞թէ կարելի է դադափարներն այդպիսի շրջանակներով սահմանափակել. պատմութեան դասերը պարզ են և անտարակոյս և քիչ չեն բաղմամբիւ հակառակ կամ թշնամի ցեղերի, ազգերի և պետութիւնների իրար հետ խաղաղութեան կամ դաշն կնքելու դէպքեր ու փաստեր։ Մարդկութիւնը ճիշտ է չափադանց դանդաղիտ է, բայց անշեղ դիմում է դէպ յառաջ, աւելի և աւելի մեծ խմբեր կազմելու, մի ընդհանուր դադափարի շուրջը խմբուելու։ Պրոմէթէոսը ձգել է քարը ովկեանի մէջ և ալիքների շրջաններն աւելի և աւելի մեծանալով միանում են ովկեանոսի հետ։

Այդպէս է պատմութեան անիւը, ժողովրդների աւելի մեծ խաւեր կամ խմբեր են ելնում պատմութեան ասպարէզը և կամենում են աւելի և աւելի չափերով մասնակցութիւն ունենալ կեանքի ամենատեսակ խնդիրներում և հարցերում։ Կեանքի ճոխութեան, զիտութեան, արուեստի և այլն ժողովրդականացման դործն անարգել

առաջ է գնում մեր աչքի առաջ։ Այդ երեւոյթը նկատուում է ժամանակակից բոլոր քաղաքակրթութեան հասարակութեանց մէջ—և այն ժամանակ, երբ հասարակութիւններն աւելի և աւելի են համայնական ընդհանուր շահերով կապուում, ամէն ինչ ժողովրդականացնում, հետզհետէ ներկայացնելով միատեսակ պահանջներ, նոքա կեանքի կռուի օրէնքի ազդեցութեամբ անշեղ դէպի իրար են դիմում—եթէ ոչ ձուլման, ապա նրանց ազատ և խաղաղ զարգացումն ու յառաջադիմութիւնը երաշխաւորող որոշ դաշինք կռելու համար։ Պատմութիւնը գնում է այդ ճանապարհով և աչք չունեցողներն ու կոյրերը չեն կարող տեսնել և հաւատալ։ Պատմութիւնը միացրել է Գերմանեան, Իտալեան, ստեղծել է Ամերիկական զօրեղ միացեալնահանգները, ստեղծել է Աւստրիական Ֆեդերացեան, ստեղծել է Անգլիա բաղմամբիւ դաղթավայրերով և վերջապէս Գերմանեան իւր համագերմանականութեան զօջակ բարձրացնելով։ Պատմութիւնն է գրել «Ամերիկան ամերիկացիների համար» սկզբունքը և հեռու չէ այն ժամանակը, երբ մայր ցամաքը մարդկութեան օրրանը—անդոյն Ասիան, Եւրոպական քաղաքակրթութեամբ վերածնունելով նոր կեանքի համար կը յայտարարէ—«Ասիան ասիա-

ցիները համար» սկզբունքը, և աշխարհը հետե-
եալ պատկերը կը ներկայացնէ. . . սկզբերի կամ
ժողովրդների մեծամեծ խաւերը կը կլանեն փոք-
րերին և երկրագնդի բոլոր անկիւնները կը բռնեն
մեծ թւով մարդկային խմբեր—հաւասարապէս
գիտուն, զօրեղ և քաղաքակրթուած—որոնք
և իրար իրաւունք կը յարգեն—որովհետեւ իրա-
ւունքի մասին եղած հասկացողութիւնը նոցա
համար կը ճանաչուի բարձրագոյն օրէնք և ա-
մէքը կենթարկուեն այդ օրէնքին:

Պէտք է խորապէս համոզուած լինել, որ
մենք այժմ կանգնած ենք մարդկութեան ընդ-
հանուր խաղաղացման դարաշրջանի ծայրին. մենք
նայում ենք վաղուայ երջանիկ կեանքին—ապա-
գային: Մարդկութիւնն այժմ ապրում է հրաշք
ների դարում: Բօէրների չարչարանքն ու նեղու-
թիւնները հեռագրի միջոցով միւսնոյն օրն ար-
ձագանք գտաւ. նոյնը ոչ ուշ քան հետեւեալ օրն
արձագանք գտաւ. հեռաւոր արևմուտքի ագա-
րակատիրոջ և Աւստրալիայի անտառում ապ-
րող դաղթականի սրտում: Գործարանատէրը իւր
շահերի համար երկրագնդի բոլոր տեղերն է
պտտել և մօտեցրել իրար. նա կենտրոնական
Աֆրիկայում գործակալութիւններ է հիմնել—
թէեւ հէնց Զինդերի կարի մեքենաներ վաճառե-

լու համար. նա կիսամերկ վայրենիներին է տա-
լիս այդ մեքենաները և շահագորգութեամբ է չա-
փազանց—որ իւր սեւ պարտապաններն օգտուեն
«աշխարհի բարիքներից»—և իւր պարտքը վճա-
րեն. նա դեռ ևս ունի մի «քաղցր երազ» նրանց
վրայ հեծանիւ վաճառելու: Բացի այդ մեր մո-
լորակի բոլոր խաւար անկիւններն իսկ կապուել
են իրար հետ հրաշքով. փոխադարձ շահերի հա-
մար երկաթուղիներ են շինել, հեռագրաթելեր
անցկացրել ամէն կողմ ուր միայն հնարաւոր է
և նման տեսակի հաղար ու մի հրաշագործու-
թիւններ—և պատմութիւնն այդ ամէնից օգտուել
և օգտուում է ցայսօր: Եւ ահա մեր և «արջի
անկիւնը» որոնց մասին ոչ միայն մարդկութիւնը
տեղեկութիւն չունէր—այլ և մենք մեր մասին
ոչինչ չ'ընթերցէինք—մարդկութեան համար մի մեծ
ճանապարհ է դառնում և մեզնով սկսում են
հետաքրքրուել ամէնքը—քանի որ այդ մեծ և
լայն ճանապարհով կարող են անցնել խաւար և
քաղցած պրոլետարիատի ահադին ամբոխը, սո-
վը, շնորհիւ մեր և արջի անկիւնի տղէտ բնա-
կիչների աժան աշխատանքի մեծ քանակութեամբ
մշակուած նիւթերի ձեով. ապա այդ ճանապար-
հի վրայով կարող է գալ ժանդախտը—խողերան
և մարդկային հանճարի զարմանալի արդիւնքնե-

րը և ապա թէ ժողովրդական ազատ գաղափարները:

Քաղաքներում—ուր փողոցները ճանապարհներ են ներկայացնում—բնակիչների շահերը պահանջում են իրար չ'ընկալել և խառնարում չ'խառնափելու համար առանց լապտերի չ'ընկել, երկիրը պէտք է դառնայ մի մեծ ճանապարհ և հեռու չէ այն ժամանակը, երբ բոլոր ազգերը կամ հանուր մարդկութիւնը կը պահանջեն որ ամէն տեղ լապտերները վառ լինին, ուսման և դիտութեան լոյսն ամէն տեղ վառ և պայծառ լուսաւորէ, որ պէտքի որ և է մէկին չ'ընկալեն: Ամէնահեռաւոր երկիրների շահերն այնպէս սերտ կերպով շաղկապուում են մեր աչքի առաջ, այնպէս նրանց մէջ հաստատուում է ամուր և անքակտելի կապ, որ մենք կարծես թէ զգում, լսում ենք պատմութեան քայլերը, տեսնում ենք թէ ինչպէս հակակրութիւնից սկիզբն է առնում խաղաղութիւն—թէ ինչպէս ոյժը տեղի է տալիս իրաւունքի առաջ:

Մօտենում է մարդկութեան խաղաղացման ժամանակը, «զինուած իրաւունքի» ժամանակը, այն է—ինչպէս հասարակութեան մէջ առանձին անհատը—նոյն իսկ ամենաթոյլ անհատը հանգիստ և ազատ պէտք է օգտուէ իւր իրաւունք-

քից—որովհետեւ իւր իրաւունքը ապահոված պէտք է լինի հասարակութեան կամ ընդհանուրի ոյժով:



Նոյնպէս կը դայ շուտով այն ժամանակը—երբ առանձին առանձին համայնքները խաղաղ և ազատ կ'օգտուին իրենց իրաւունքից, որովհետեւ այդ էլ ապահոված կը լինի համայն մարդկութեան ոյժով:

Անշեղ և անդարձ կերպով գալիս մօտենում է մարդկութեան խաղաղացնելու շրջանը. նոր և չ'տեսնուած ժամանակ, և մարդկութիւնը նոր կեանքի համար կարթնանայ. կը յաղթես Եսայի. «և իրենց սրբից խփեր կը ձուլեն» իրենց նիւզակներից մանդաղների ազգն ազգի վրայ սուր չի բարձրացնի և այլևս չի պատերազմի:

Թէ միջազգային համերաշխութիւնը կամ խաղաղութիւնն ինչ ճանապարհով կը գայ վերջնականապէս մարդկութեան զինաթափ անելու ու ընդհանուր խաղաղութիւն հաստատելու, այդ ցոյց կը տայ գուցէ և մօտիկ ապագան:

Վերջացնում ենք մեր ասելիքը Շ. Ռենուարի խօսքերով, որ ասել է Փրանսիայի անկումից յետոյ (1872 թ.): «Մենք հէնց երեկոյեան յաղթուածներս համարձակուում ենք բարձր ձայնով յայտարարելու ամբողջ աշխարհին, որ մեր

վիրաւորուած եսասիրութեան զգացմունքը չի
 տատանի մեր հաւատը յաւիտենական ճշմարտու-
 թիւնների նկատմամբ: Խաղաղութիւնը երջան-
 կութիւն է—իսկ պատերազմը տանջանք ու
 դժոգք: մեր Թանկագին հայրենիքը չի կարող իւր
 վերածնութեան աւելի պայծառ ապացոյց ներ-
 կայացնել քան իւր տհաճութեան զգացմունքը
 քաղաքակրթութեան ընդհանուր գործին: Թող
 կորչէ պատերազմն ու հասուցման պահանջը—
 որ հիմնուած է կոպիտ ոյժի վրայ:



Թանգարանի Գրադարանի Գրքերի
 Դասակարգման Եւ Գրադարանի
 Գրքերի Կարգադրման Եւ Գրադարանի
 Գրքերի Կարգադրման Եւ Գրադարանի
 Գրքերի Կարգադրման Եւ Գրադարանի
 Գրքերի Կարգադրման Եւ Գրադարանի
 Գրքերի Կարգադրման Եւ Գրադարանի
 Գրքերի Կարգադրման Եւ Գրադարանի
 Գրքերի Կարգադրման Եւ Գրադարանի



18.795

18.795
97-0

